№ 166 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 20

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍ. 20 № 166

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ. Տէլէֆօն № 253.

Օգոստոսի 19-ին, կէսօրից յետոյ 4 ժամին, ծանր հիւանդութիւնից յետոյ, վախճանվեց պաշթօնաթող գենէրալ-լէյտենանտ

ՆԻԿԻՏ ԳՐԻԳՈՐԻԵՎԻՉ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

որի մասին հանգուցեալի վշտահար կինը և որդիքը յայտնում են ազգականներին և ծանօթներին։ Ամփոփը կը լինի օգոստոսի 20-ին, երեկոյեան 7 ժամին, իր բնակարանում, Նիկոլաևսկայա փողոցի վրա № 96, տուն Սուլխանովի։ Թաղման օրվայ մասին կը յայտարարվի առանձին, 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն. Վերջին տեղեկութիւններ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական պատգամաւորութիւնը Փոխարքայի մօտ. Մայրենի լեզուն տարրական դպրոցներում. Պետական Դուման և եւրօպական մամուլը. Յաջորդական քայլեր. Աւերածների վայրից. Նամակ Կարսից. Նամակ Հին-Նախիջևանից. Նամակ Ծալկայից. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Հաշտութեան լուրը, որ հաղորդեց հեռագրական գործակալութիւնը, ընդհանուր գոհութիւն պատճառեց ամեն տեղ։

Պատերազմը կորցրել էր իր հետաքրքրութիւնը և բարոյական նշանակութիւնը։ Նա այլ ևս նոր ասելիք չունէր, իսկ շարունակվելով նա միայն աւելացնում էր զոհերի թիւը և ծախքերի քանակը։

Ռուս հասարակութեան համար հաշտութիւն կայանալը մի մեծ ուրախութիւն է, որովհետև պատութիւնը կանգնած է ներկայումս մի շարք շատ կարեւոր ներքին գործերի և լուրջ խնդիրների առաջ, որոնք պահանջում են թէ վարչական և թէ հասարակական ոյժերից եռանդուն և ուշադիր զործունէութիւն։

Հաշտութիւնը կայանում է այնպիսի հանգամանքներում, երբ ռուսական քաղաքագիտութիւնը այլ ևս չէր մտածում իր շահերի ընդարձակման մասին Հեռաւոր Արևելքում, այլ այն բանի մասին, որ նրա կորուստները լինեն կարելիին չափ փոքր և ոչ անպատուաբեր։

Հաշտութեան պայմանները որոշակի դեռ չեն հրատարակված. բայց յայտնի է, որ Ռուսաստանը կորցնում է Սախալին կղզու մի մասը և Մանջուրական երկաթուղու այն մասը, որ իրապէս գտնվում է այժմ եապօնական զօրքի տրամադրութեան տակ։ Պատերազմական տուգանքի փոխարէն կը հատուցվի մօտ 100 միլիոն բուբլի Եապօնիային զանազան անխուսափելի ծախքերի համար, որ նա արել է ռուսական դերիների պահպանութեան և ուրիշ այդ տեսակ նպատակների համար։

Յետ կանչելով իր զօրքը Հեռաւոր Արևելքից Ռուսաստանը ազատում է իրան այն ծանր ծախքերից, որոնք ուժասպառ էին անում պետական գանձարանը։ Իսկ երկրի զանազան մասերը մեծ ծախքեր են պահանջում այն մեծ վերանորոգչական գործի համար, որին պէտք է ձեռնարկել հատատ և ապահով դարգացում առաջացնելու նպատակով։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Շուշին կտրված է արտաքին աշխարհից, որովհետև հեռագիրը և պօստը չեն գործում։ Մի քանի տեղեկութիւններ, որոնք հաղորդված էին հեռագրի դադարումից առաջ, ցոյց են տալիս, որ ընդհարումը խիստ բնաւորութիւն է ստացել և հրդեհի են մատնվել տներ քաղաքի մի քանի մասերում։ Հայերը մի քանի թուրքերի, որոնք նրանց ձեռքն են ընկել, անվնաս դարձնելու նպատակով, զինաթափ են արել և զետեղել են առանձին բնակարաններում և պէտք է պահեն այդպէս, մինչև ընդհարումը վերջանայ։

Աղդամի շրջանում գտնվող օդէդրծարանները մատնվել են կրակի և կողոպուտի։ Յարձակվողները վերցրել են թէ մասնաւոր և թէ արքունական գոյքեր. տեղական փոքրաթիւ պահակախումբը չէ կարողացել պաշտպանել գործարանները։

Կովկասեան բարձր իշխանութիւնը կարգադրել է, որ Թիֆլիսից և Բագուից անյապաղ զօրամասեր ուղարկվեն Շուշի անկարգութիւնները զսպելու նպատակով։ Զինուորական այդ ոյժը բաղկացած մօտ հինգհարիւր հոգուց, միանալով Շուշու շրջանում գտնվող զօրքի հետ, յոյս կայ, որ կարող լինեն վերջ դնել ընդհարումներին։

Բագուի հաշտարար յանձնաժողովը իր իր նախագահ Սաֆարալիեվի միջոցով դիմել է Թիֆլիս Շեյխ-ուլ-իսլամին և Էջմիածին Վեհափառ Կաթողիկոսին խնդրելով նրանց աջակցութիւնը խաղաղացնելու Շուշու ազգաբնակութեան յուզված մտքերը։

Թիֆլիսում գտնվող դարաբաղցիները իրանց կողմից ներկայացան Փոխարքայի օգնական Սուլթան Կրիմ Գիրէյին և մանրամասն զեկուցում տուին Շուշու գաւառի դէպքերի մասին։

Երէկ երեկոյեան հեռագրական հաղորդակցութիւնը վերականգնեց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՄՕՏ

—

Առաջ ենք բերում այն ուղերձի պատճենը, որ պատրաստված էր մատուցվելու հայկական պատգամաւորութեան կողմից կովկասեան Փոխարքային Կիսլովոդսկում երէկ, օգոստոսի 19-ին։

Զերդ Գայծառափայլութիւն կոմս Իլարիոն Իվանովիչ։

Հայ ժողովուրդը և եկեղեցին խորին գոհունակութեան և մեծ ուրախութեան զգացմունքով ընդունեցին օգոստոսի մէկի Բարձրագոյն Ուկազը, որով վերականգնվեցին հայ եկեղեցու և ժողովրդի դարերով սրբագործված իրաւունքները՝ լայն կրթական գործունէութեան և ազատ կերպով կարգադրելու համար եկեղեցական և վանքական գոյքերը։ Այդ արժանայիշատակ օրը, երբ Թագաւորի գահի բարձրութիւնից յայտարարվեց վստահութիւն դէպի հայ ժողովուրդը և եկեղեցին և վերականգնվեցին Ռուսական պետութեան պատմական աւանդութիւնները, խորը կը տպաւորվի բոլոր հայերի սրտերում։

Հայ ժողովրդի դարաւոր կապը Ռուսաստանի հետ վերջին տարիները, նախքան Զեր Գայծառափայլութիւնը կը ստանձնէր մեր երկրի վարչութեան ղեկը, սթագնված էր մի շարք տխուր թիւրիմացութիւններով, որոնք առաջացել էին վարչական այնպիսի ձեռնարկութիւններից, չէին պատասխանում պետական նպատակներին և յարուցել էին հայերի մէջ վիրաւորանքի և երկիւղի զգացմունքներ։ Այդպիսի ծանր պայմաններում Դուք, Զերդ Գայծառափայլութիւն, ստանձնեցիք երկրի կառավարչութիւնը խաղաղացման և նրա ընդհանուր պետական ստեղծագործող աշխատանքին մասնակից անելու լայն ծրագրով։ Զեր պետական կորովամտութիւնը և պետական խնդիրների վրա ունեցած լայն հայեացքը դրական էին այն բանի, որ Զեր վարչութեան տակ մեր երկիրը կը մտնէ Կովկասի ամբողջ ազգաբնակութեան խաղաղ զարգացման կուլտուրական առաջադիմութեան նոր ճանապարհի վրա, իսկ անարդարութիւնը, որ այնքան երկար ժամանակ կաշկանդել էր հայ ժողովրդին և պատճառել այնքան ապարժան տանջանքներ, վերջապէս կը փարատվի և տեղի կը տայ ալ դարաց ի և անաչառ վերաբերմունքի առաջ։ Հայ ժողովուրդը խորապէս գիտակցում է, որ ճշմարտութեան բացման գործում Նորին Կայսերական Մեծութեան առաջ, որ օգոստոսի 1-ի ամենաարդարացի ակտով պակվեց, անգնահատելի նշանակութիւն ունեցան Զեր Գայծառափայլութեան ջանքերը, որոնք համակված են մարդասիրութեան և բարեացակամութեան ոգով։

Կովկասեան քաղաքների հայ ազգաբնակութիւնը, որի ներկայացուցիչներն ենք մենք այժմ, դրղված այդ գիտակցութիւնից, դրել է մեզ վրա քաղցր պարտաւորութիւն յայտնելու Զեզ, Զերդ Գայծառափայլութիւն, ամենանվեր, ամենախորին շնորհակալութիւն և ջերմ ցանկութիւններ Զեր թանգագին կեանքի արիշատութեան համար, որպէս զի Դուք, խաղաղացնելով արիւնահեղ երկպառակութիւններով տանջվող երկիրը, լրացնէք Զեր սկսած գործը ի բարօրութիւն կովկասեան բոլոր ազգերի և ի փառս ընդհանուր հայրենիք Ռուսաստանի։ Կատարելով նոյն հայ ազգաբնակութեան ցանկութիւնը, մենք դիմում ենք Զեզ, Զերդ Գայծառափայլութիւն, ամենախոնարհ խնդիրքով արկանել առ ոտս Նորին Մեծութեան Թագաւոր Կայսրի անսահման շնորհակալութիւն վերականգնված վստահութեան համար դէպի հայ ժողովուրդը։

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

II

Բոլոր գիտութիւններն ունեն այնպիսի տարածված ճշմարտութիւններ, որոնք արդէն դասել են ընդհանուր սեփականութիւն։ Մանկավարժութեան մէջ էլ այն ճշմարտութիւնը, որ զարգացման ու դաստիարակութեան միակ դիւրին ու առողջ ուղին մայրենի լեզուն է, արդէն դառել է ամենքի համար ակներև մի բան։

Ինչպէս մեր նախընթաց յօդուածում ասացինք, Թիֆլիսում գումարված տարրական դպրոցների ուսուցչական ժողովն այդ ճշմարտութիւնը մի անգամ ևս կրկնելու համար լիապէս ձեռնհաս էր։

Այդ փոքրիկ ուսուցչական ժողովից առաջ Կովկասի փոխարքան ոչ միայն ընդունել է այդ մանկավարժական ճշմարտութիւնը, այլ և «անհրաժեշտ է ճանաչել, որ տարրական դպրոցներում բոլոր առարկաներն անցնեն սաների մայրենի լեզուով»։

Այդ տարրական ճշմարտութիւնից այն կողմ այլ ևս անհնար է ընդունել գումարված ժողովի մանկավարժական հեղինակութիւնը։ Նրա մշակած ծրագիրն այնքան բարեօնական է, որ ոչնչով չէ կարելի եզրակացնել, թէ ժողովին մասնակցողները բաւարար կերպով ծանօթ են եղել մանկավարժական զանազան վիճելի ու անվիճելի հարցերի հետ։

Նրանց մշակած ծրագրի ամենախոշոր պակասութիւնները հետևեալներն են։

Կրօնի դասաւանդութիւնը։

Սկզբունք է, որ սաներին պէտք է ոչ թէ կրօնական գիտելիքներ տալ—(կրօնը գիտութիւն չէ) այլ կրօնի դասաւանդութիւնով ներշնչել բարոյական դաստիարակութիւն, դարձնել նրանց բարի մարդ և լաւ քրիստոնեայ։

Այդ ճշմարտութիւնը հիմք ընդունելով տարրական դպրոցի կրօնի դասաւանդութեան համար, տեսնենք թէ որքան է նպատակի հասնում ժողովի որոշումը։

«Առաջին տարվայ ընթացքում, ասում է ժողովի արձանագրութիւնը, քրիստոնեայ աշակերտները սովորում են պատմել պատկերներով սրբազան պատմութիւնից. աշխարհի հին ստեղծագործութիւնը, սկզբնական մեղքը և դրախտից ընկնելը. Փրկչի գալստեան խոստումը, ծնունդը և մի քանի աղօթքներ»։

Դա նոյն հին ծրագիրն է, ինչ տիրում էր և այժմ էլ տիրում է պետութեան բոլոր դպրոցներում։ 6—7 տարեկան մանկիկին ուզում են հասկացնել աշխարհի ստեղծագործութիւնը, դրախտից ընկնելը... Դա բացարձակ անմտութիւն է և անհնարինութիւն։

Հազար անգամ աւելի լաւ չէը լինի այդ մեծերի համար անգամ անհասկանալի կոսմոգենիայի փոխարէն մանուկներին սովորեցնել մի քանի փոքրիկ բարոյախօսական պատմութիւններ՝ և միտքը լուսաւորող, և բարք ուվարքը մաքրող։

Գիտեմ, դարերի նախապաշարմունք կայ կրօնի դասաւանդութեան հետ կապված... Ես էլ հէնց այդ եմ ասում. յիշված ժողովը ձեռնհաս չէր այդ կնճռոտ հարցին բաւարար լուծում տալու համար։

Միւս դասարաններում էլ կրօնի աւանդման մէջ պէտք է մտցնել համապատասխան փոփոխութիւններ։ Կրօնի դասաւանդութիւնը պէտք է դարձնել քրիստոնէութեան պարզ ու համաշխարհային բարոյականութեան ուսուցում և ոչ դոգմայի և մովսիականութեան պատմութիւն։

Մեր ակնարկած նպատակի համար շաբաթական 2 դաս պէտք է տալ կրօնին բոլոր դասարաններում, իսկ 1 դասը պահել ուրիշ առարկայի։

Մայրենի լեզուի դասաւանդութեան մէջ պէտք է անպատճառ մտցնել և գրութեան կամ գեղագրութեան դասերը, յանձնելով մի և նոյն անձին այդ երկու անբաժան առարկաները փոքր դասարաններում։ Ծրագրում թէ և այդ յիշված չէ, բայց մեղ թւում է, թէ այդպէս էլ արված է, որովհետև մայրենի լեզուին տրված է շաբաթական 8 դաս։

Թուաբանութեան համար բոլոր 4 դասարաններում լիուլի բաւական է շաբաթական 4 դասը, այն ինչ ծրագրված է 6, 5, 5 և 4 ժամ։

Ծրագրից պակասում են իրագիտութիւնը փոքր դասարաններում և հայրենագիտութիւնը՝ բարձրներում, այն ինչ դրանք են փոխարինելու տարրական դպրոցներում և բնական գիտութիւններին, և պատմութեանն ու աշխարհագրութեանը։

Պակասում է յատուկ գծագրութեան և երգեցողութեան աւանդումը. այն ինչ դրանց անհրաժեշտութիւնը ոչ մի մանկավարժ չէ կարող մերժել։

Ճշմարիտ է, եթէ հետևենք յայտնի Ժակոտօի մէթօդին և ասենք «մէկը ամենքի մէջ և ամենքը մէկի մէջ», կարող ենք այն ժամանակ ամենևին ծրագիր էլ չը կազմել և ամեն ինչ յանձնել մի անձի ու հրամայել. վերցրու մի գիրք և դրանով ամեն բան սովորեցրու սաներիդ։

Ծրագրի մէջ չը կան իրագիտութեան դասեր, այն ինչ ժողովականները բարի ցանկութիւն են յայտնել աշակերտներին ծանօթացնել «գիւղատնտեսական զանազան ճիւղերի գործնական աշխատանքների հետ»։ Եթէ լոկ ծանօթութիւն է դա, չարժէ, որովհետև Կովկասում, բացի Թիֆլիսից ու Բագուից, չը կայ ոչ գիւղ, ոչ էլ քաղաք, որի երեխաներն այս կամ այն չափով ծանօթ չը լինեն գիւղական աշխատանքների հետ։ Իսկ եթէ դրանով որևէ նոր, կատարեալ աշխատանք է ակնարկվում... դա արդէն չափազանց ծանր ու բարդ հարց է և դուրս տարրական դպրոցի ծրագրից։

Տարրական, 4 դասեան դպրոցի նպատակը մեզանում լինելու է այն, որ մարդիկ գրել, կարդալ և հաշուել սովորեն, մի քիչ աւելի մշակված ուղեղ ունենան, գոնէ փոքր ինչ ինտելիգէնտութիւն և, իբր կրթութեան կամ դաստիարակութեան հետևանք, մի քիչ աւելի

մեղմ վարք ու բարք։ Եւ որ գլխաւորն է— այդպիսի անհատների թիւն այնքան աճի, որ հնար լինի հասարակական գիտակցութեան և վարքի ընդհանուր մակերևոյթը բարձրացնել։

Ժողովն ամենևին չէ զբաղվել այն հարցով, թէ այդ տարրական դպրոցն աւարտողները, եթէ շարունակել ցանկանան, ի՞նչ են անելու, որ դասարաններն են ընդունվելու միջնակարգ դպրոցներում, արդեօք քննութիւն տալու են, թէ առանց քննութեան...

Ահա ծրագրի գլխաւոր պակասութիւնները։ Դրանց լուծման համար 10—12 տարրական դպրոցների ուսուցիչներից կազմված մի ժողով ձեռնհաս չէ։

Պէտք է նրանց մշակած ծրագիրն ընդունել միայն մի տարվայ համար և առաջիկայ տարվայ ընթացքում հրաւիրել նոր ու աւելի ձեռնհաս ժողով, թողնելով մամուլին այդ հարցի մասին բոլորովին ազատ կարծիք յայտնելու։

Հինը կորստաբեր է, դրա համար մենք առաջարկում ենք նոր մշակվածը գոնէ մի տարով ընդունել, մինչև որ նրա թերութիւնները վերացվեն։ Հնին վերադառնալը յանցանք է։

Խաժակ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

«Մշակի» նախընթաց համարներից մէկում զետեղված էր ռուսաց նշանաւոր, նամանաւանդ մայրաքաղաքի թերթերի կարծիքը Պետական Դումայի կազմակերպութեան, նրա էութեան և նշանակութեան մասին։ Ընդհանրապէս վերցրած պէտք է ասել, որ վերոյիշեալ թերթերը Պետական Դումայի մասին աւելի նպաստաւոր կարծիք են յայտնում, քան թէ եւրոպական մամուլը, որի աչքում Պետական Դումայի նշանակութիւնը աւելի նսեմանում է։ Եւ յիրաւի մեր կարծիքով էլ եւրոպական մամուլի կարծիքը աւելի գնահատելի և հեղինակաւոր է, քան թէ ռուսական մամուլինը, որովհետև եւրոպական ազգերը ներկայացուցչական կառավարութեան հարցի մասին աւելի մեծ փորձառութիւն ունեն և հետևապէս աւելի շուտ ըմբռնեցին Պետական Դումայի՝ Ռուսաստանի ապագայի համար ունեցող իսկական նշանակութիւնը։

Ճիշդ այն օրը, երբ հրատարակվեց Բարձրագոյն ուկազը Պետական Դումայի մասին, եւրոպական մամուլի ընդարձակ էջերը լցվեցին քննադատական բազմաթիւ յօդուածներով, որոնք մանրամասն պարզաբանում էին Պետական Դումայի կամ այսպէս կոչված «ռուսական պարլամենտ» նշանակութիւնը։

Ճիշդ մի և նոյն՝ մեծ մասամբ անաչառ կարծիքն է յայտնում և գերմանական մամուլը, որի հետ ծանօթացնելը մեր ներկայ յօդուածի միակ նպատակն է։

Մեր կարծիքով Պետական Դումայի մասին ամենաճիշդ կարծիքը յայտնեցին գերմանական մամուլի այն օրգանները, որոնք պատկանում են ազատամիտ և դեմոկրատական ուղղութեան։

Դրանք մօտաւորապէս հետևեալ կարծիքն են յայտնում։

Օգոստոսի 6-ի Բարձրագոյն Ուկազով Ռուսաստանը իբր թէ մտնում է աշխարհիս սահմանադրական միապետական երկրների շարքը։ Բայց այդ սահմանադրութիւնը հիմնաւոր չէ։ Դա ոչնչով չէ փոխում Ռուսաստանի աւտոկրատական սիստեմը և նրա հիման վրա եղած ժողովրդական ներկայացուցչութիւնը բոլորովին չէ սահմանափակում միապետական իշխանութիւնը։ Պետական Դուման երեւան է գալիս իբրև դասակարգային և ոչ թէ ժողովրդական ներկայացուցչութիւն, որ միայն խորհրդակցական նշանակութիւն ունի։

Ռուսաստանի միապետը չէ պարտաւորվում Պետական Դումայի վճիռները ի կատար ածելու, նա կարող է նոյն իսկ բոլորովին անուշադրութեան մատնել վերոյիշեալ վճիռները, որովհետև Պետական Դուման օրէնսդրական նշանակութիւն չունի։ Բացի դրանից Պետական Դումայի կազմը նրա սկզբունքին չէ համապատասխանում։ Նրա ընտրութիւնը թէև գաղտնի է, բայց ընտրողական իրաւունքը սահմանափակված է։ Այնտեղ կարող են մասնակցել միայն բարձր ցենզ ունեցողները, որից զուրկ է բանւորական-պրոլետար դասակարգը։

Պետական Դումայի թերութիւններից մէկն էլ, եւրոպական մամուլի կարծիքով այն է, որ նա զրկում է օտարահպատակներին ընտրողական իրաւունքից։ Այդ օտարահպատակները, հաւանօրէն, ռուսական հրէաներն են, որ պէտք է հանդիսանան իբրև իրաւազուրկ պարիաներ։

Յամենայն դէպս Պետական Դուման Ռուսաստանի ժողովրդի բարեկեցութեան համար իբրև դարագլուխ կազմող մի հիմնարկութիւն է հանդիսանում, որովհետև նա տալիս է երկու շատ նշանաւոր իրաւունք։ Դրանցից առաջինը նախաձեռնութեան իրաւունքն է օրէնսդրական շրջանում և երկրորդը կօնտրոլի իրաւունքը տէրունական բիւդժէտի վերաբերմամբ։ Ժողովուրդը իրաւունք է ստանում իր ներկայացուցիչների միջոցով Ռուսաստանի Միապետի ուշադրութիւնը դարձնել ցաւալի օրէնքների վերացման վրա և խնդրել դրանց փոփոխելու։

Պետական Դուման Ռուսաստանի Թագաւոր Կայսրին կը յայտնի ժողովրդի ցանկութիւնը, և միայն մինիստրների խորհուրդը չէ յարգի, ինչպէս առաջներում էր։ Պետական Դուման արտայայտիչ կը հանդիսանայ ժողովրդի գանգատների և ցաւերի համար, բայց որ ամենագլխաւորն է, նա կը սահմանափակի մինիստրների իրաւունքները և պաշտօնեաների զանազան կամայականութիւնները։

Ժողովուրդը, որ իր երկրորդ իրաւունքով կենթարկի իր կօնտրոլին տէրութեան բիւդժէն, մեծ չափով զարկ կը տայ Ռուսաստանի պետական տնտեսութեան զարգացմանը։

Եւրոպական մամուլը մի խօսքով ընդհանրապէս կարծում է, որ Ռուսաստանի Պետական Դուման պարլամենտ չէ սահմանադրական մաքով։ նա ոչ թէ ժողովրդական, այլ դասակարգային ներկայացուցչութիւն է, որից դուրս են երկրի պրոլետարները։

Այդպէս է կարծում գերմանական ազատամիտ և դեմոկրատական ուղղութեան մամուլը։

Լ. Բաբայեան

ՑԱՌՈՐԴԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Յուլիսի 16-ի ակտը նշանաւոր է մանաւանդ նրանով, որ այդ օրը Կովկասեան բարձր իշխանութիւնը հաւատի և վստահութեան քուէ տուեց Կովկասի ազգաբնակութեանը և մամուլին ի դէմս այդ երկուսի ներկայացուցիչների, որոնք հրաւիրված էին խորհրդակցութեան այնպիսի հարցերի մասին, որոնք կապված են ազգաբնակութեան ներքին «շահերի և կարիքների» խնդրի հետ։

Սակայն պարզ է, այդ ակտը միայն այն դէպքում կարող է ունենալ իր բարերար հետևանքները, երբ այդ ակտին յաջորդում են միւս երկու ակտեր՝ խօսքի և հաւաքումների ազատութիւնը։ Առանց այդ երկու գործոնների, զեմստվային հարցը կը կորցնի իր կենսունակութիւնը և կը դառնայ գունատ, վատառողջ, մաշված՝ մի օրգան, որի կողքից բժիշկն ու դեղօրայք, կարկատանն ու ախ ու վախը անպակաս ընկեր պէտք է լինեն։

Երկար խօսել խօսքի (դրաւոր և բերանացի) և հաւաքումների բարերար ազդեցութեան մասին հասարակական խնդիրների ճիշդ լուծման գործի համար՝ կը նշանակէ հազարերորդ անգամ կրկնել մի ճշմարտութիւն, որի անհրաժեշտութիւնը դարերի ընթացքում ապացուցել է գործով ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։

Մեզ քաղցր է հաւատալ և յուսալ, որ մեզ յուլիսի 16-ին վստահութեան և հաւատի քուէ տուող Փոխարքան շուտափոյթ միջոցներ ձեռք կառնի վերացնելու նախ և առաջ այն արտակարգ զինուորական միջոցները, որոնք այսօր շղթայում են ընդարձակ Անդրկովկասի լայն շրջանները և ապա՝ թեթևացնելով մամուլի, տպագրական խօսքի ծանր կապանքները թոյլ կը տայ մեզ երկրի ինտելիգէնտ ոյժերիս հասարակութեան և ողջ ազգաբնակութեան որպէս լայն նոյնպէս և նեղ շրջաններում արծարծել և ժողովրդականացնել պետութեան մարդասէր և հոգատար վերաբերմունքի այն բարերար սերմերը, որոնք այնպիսի զգուշութեամբ ցանվեցին մեր մէջ Փոխարքայի շնորհիւ յուլիսի 16-ի խորհրդակցութեան ժամանակ։

Մեր մէջ կենդանի է հաւատ դէպի մեր օգտաւէտ ոյժերը յօդուտ հասարակութեան. իսկ այդ արտայայտելու համար մեզ պակասում է Փոխարքայի հաւատի և վստահութեան յաջորդական միւս երկու ակտերը՝ խօսքի և հաւաքումների ազատութիւնը։

Ա. Աթանասեան

ԱԻԵՐԱԾՆԵՐԻ ՎԱՅՐԻՑ

VIII

Գիժաձոր, յուլիսի 19-ին

Գեօմուր գիւղից սկսած մենք մի յետադարձ այցելութիւն պիտի կատարէինք լեռնային այդ շրջանում ընկած կողոպուտի ու թալանի ենթարկված հայ գիւղերը։ Պիտի սկսէինք ամենաբարձրից և իջնէինք աստիճանաբար դէպի ցած, դէպի ձորի խորութեան մէջ ընկած Ղարաբաբա գիւղը։

Սարերի ու ձորերի մէջ ձգված ամենադժվարին, տեղ-տեղ նոյն իսկ վտանգաւոր նեղ շաւիղը ձեզ առաջնորդում է դէպի Գիժաձորը։ Այդ լեռներին սովոր ձին կամ դաթիրը միայն ընդունակէ իր զգոյշ քայլերով անվտանգ անցնել լեռնային այդ ճանապարհներով և ձեզ անփորձ տեղ հասցնել։

Թոխլի Կայան մի սիրուն գագաթէ ամենաբարձր Գիժաձորի շրջանում 5 վերստ հեռաւորութեան վրա, մի կողմից կաղ ելով գեղեցիկ Սալվարդիի շարունակութիւնը։ Թոխլի Կայանի ստորոտում մի այլ սիրուն գագաթ—Կուշ Բուլաղը հիւսիսային լանջում կերտած ունի մի փոքրիկ աւազան, գոգաւոր և կուսական որի մէջ ձգված է Գիժաձորը։

Գիժաձորը ունի 110 տուն, ժողովուրդ 890 հոգուց բաղկացած։ Լեռնային կլիման, աշխարհագրական դիրք պիտի որ դարձնէին գիժաձորցու մէջ տոկուն ու յամառ, անվեհեր մի սիրտ, բայց մենք այդ բանը չը նկատեցինք նրանց մէջ։ Մի հայ կին, որի հետ Գիժաձորի ատենորակ գուռներով աղբիւրի մօտ փոքրիկ խօսակցութիւն ունեցանք, անբաւական էր Թուրքերի յարձակման ժամանակ Գիժաձորի տղամարդկանց դիմադրութեամբ։ Մեզ վրա լեռնցուն յատուկ հպարտ ու անվեհեր տպաւորութիւն թողնող Գիժաձորի հայ կինը դժգոհ էր նոյն իսկ Գեօմուրի կարիչ երիտասարդների դիմադրութեամբ «եթէ զօրքը մի քիչ էլ ուշ հասնէր, մեր տղամարդիկ գիւղը Թուրքին կը մատնէին, թող գլուխները շատ էլ չը գովեն». այս կարծիքը յայտնում էր մի հայ կին, որը կարծէք բողոքում էր, որ հարիւրաւոր Թուրքի դիակներ չը փռվեցին Գեօմուրի բարձունքների վրա։ Եւ իրաւունք ունէր Գիժաձորի հայ կինը։ Նրա շէն տունը, նրա տնտեսութիւնը աւերված էր և մոխիրը քամուն տուած։

Գիժաձորի վրա յարձակումը տեղի էր ունեցել մայիսի 15-ին։ Բաբաղշլախ, Ալմանմադ Ղշլաղ, Մնձրակ և Զառնատուն գիւղերի խումբը պաշարել էր Գիժաձորը մի առանձին թափով։ Գիժաձորին որքան էլ անարժան է այդ կուսական լեռների զաւակը կոչվելու, բայց և այնպէս առաջին օրը ցոյց էր տուել ուժեղ դիմադրութիւն, առնելով 3—4 զոհեր։ Երկրորդ օրը դրութիւնը դժուարացել էր, խումբը աւելի ու աւելի ստուարանալով նեղել էր գիժաձորցուն և վերջինը ամբողջ գիւղը, իր միջի բոլոր գոյքով և հարստութիւններով թողել էր խումբին և հաղիւ կարողացել էր գլուխ ազատել, փախչելով Գեօմուր։

Գիժաձորից խումբը տարել էր ամեն ինչ վերջին փայտեղէնն, դուռ ու լուսամուտ անգամ, կողոպտել էր նաև եկեղեցին և իր կործանող ձեռքի որպէս նշան այրելով մի տուն և թողնելով մրոտված պատերը ցից-ցից։

Գիժաձորից սպանվել էին 4 հոգի, երկուսը, կանայք, մէկը 60 տարեկան սրտաճաք եղած, միւսը 35 տարեկան վախեցած և յուլիսի 12-ին մեռած։

Գիւղի այդպիսի վախճանը խոցոտել էր մեզ հետ խօսող գիժաձորցի կնոջ սիրտը, նա վիրաւորված էր, վախկոտ Թուրքը կոխում, թալանում էր Գիժաձորը, իսկ գիւղը չունէր կըտրիչ տղաներ Թուրքին մէկ լաւ խրատ տալու։ Այդ հանգամանքը մեզ էլ հետաքրքրեց։ Անբնական էր թւում մեզ այդպիսի բարձունքներում անձի գոյքի այդ օրինակ թոյլ պաշտպանութիւնը։ Ապա ուր էին այդ լեռների հարազատ զաւակները։

Մենք գտանք պատճառը—պանդխտութիւնը, մեր ժողովրդի համար կործանիչ պանդխտութիւնը այդտեղ էլ բուն էր դրել։ Թարմ երիտասարդ ուժերը թողնում էին գիւղը, վարու ցանքը, սիրուն սարերը և գնում էին կորչելու Բաքուի հեծող, մաշող մթնոլորտի մէջ։ 110 տուն ունեցող Գիժաձորը 80 պանդուխտ ունէր, համարեա տունը մի մարդ, մի երիտասարդ ոյժ, էլ ով պիտի լինէր գիւղը պաշտպանող, զէնք վերցնող և Թուրք խուժանին դիմադրող, երբ միմեանց ետևից, որպէս մի վարակիչ ախտով բռնված, պանդխտութեան գաւազանը պիտի վերցնէին երիտասարդները և հեռանային։

Խնդիրը ծանր էր և ընդհանուր այդ շրջանի գիւղերի համար, ինչպէս մենք կը տեսնենք յետոյ «Մեր Ջահիլները անջախ թողնեն իրանց տուն ու տեղը և վազ տան մեծամեծ քաղաքներ»։

Այս դիտողութիւնը դարձեալ նոյն կինը արեց, մատնացոյց անելով Բաքուից վերադարձած մի երիտասարդի վրա, որը աչքի էր ընկնում իր հագուստով։

Մեր կշտամբանքը Բաքուից նոր վերադարձած երիտասարդին անիրաւացի թւաց, միայն ցորեն արտադրող այդ սիրուն լանջերը կրակել չէին կարողանում գիւղացուն, նա հաղիւ կարողանում էր հարկերն ու տուրքերը վճարել, նա ակամայ ընկնում էր վաշխառուի ձեռքը, վաշխառուն մի հոգէառ հրէշտակ էր գիւղում։ Այդ սիրուն լեռների, սիրուն բնութեան զաւակը փախչում էր կտոր հացի համար։ Եւ չը փախչէր ինչ անէր, երբ նրա վաստակը, տաժանելի, այդ լեռների կուրծքը մատերով պշպորելու չափ ծանր, աշխատանքով ձեռք բերած մի կտոր հացն էլ խլում էին նրա ձեռքից։ Պէտք էր այդ անօրմալ դրութիւնը փոխել, դարձնել, որ կարելի լինէր նրան կապված պահել իր հողի հետ։

«Է՜ մարդ մի բան բերիր հետդ քոթալանված գիւղի համար», հարց տուի նրան, նա հակացաւ ինձ։ «Բա ինչպէս չէ մէկ լաւ հրացան բերի»—անձնավստահութեամբ լի այս պատասխանը մի փոքր մխիթարեց մեզ, նա բոլորովին չէր մոռացել իր գիւղը, նա եկել էր իր հետ բերելով իր զէնքը։

Մեր պայմանները, մեզ շրջապատող հանգամանքները մեզ յետ էին քշել դէպի խաւար, դէպի կոպիտ ուժը, մենք ակամայ պիտի սպանէինք, որովհետև մեզ էլ սպանում էին։

Ա—Դ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Օգոստոսի 2-ին

Ինչպէս ամբողջ Ռուսաստանի, այնպէս էլ մեզ համար, այստեղի մի տարօրինակ կերպով է անցնում։ Ամեն օր խումբ խումբ գալիս են Կարս մեծ քանակութեամբ բանւոր հայեր, յոյներ, ռուսներ և Ռուսաստանի զանազան քաղաքներից, Բաքուից, Բաթումից, նոյն իսկ Թիֆլիսից։ Հարկ չը կայ ասել, որ այս տեղափոխումը առաջ է եկել խռովութիւնների և գործադուլների շարժառիթներից։ Հունձի ժամանակ է։ Ամեն տարի այս հրատապ օրերին բանւորի օրավարձը բարձրանում էր 90 կոպ. 1 բուբլի, իսկ այս տարի, շնորհիւ այն բանի, որ ահագին թւով աւելացել է բանւոր դասակարգը, հաղիւ գոյութիւն ունի 60 կոպէկ օրավարձ։

Առևտուրը վերին աստիճանի ընկած դրութեան մէջ է, ժողովրդի մէջ փող չը կայ. աւելացրէք դրա վրա անցեալ տարիների անբերրիութիւնը, և կըմբռնենք դուք թէ գիւղացիների և թէ քաղաքի անել դրութիւնը։ Այս տարի քաղաքում թէ արքունական և թէ մասնաւոր նոր կառուցածքներ չեն շինվում, այլ անցեալ տարվայ կիսատ մնացածները շարունակում և հները վերանորոգում. այս բանը առիթ է տուել փայտի խիստ էժանանալուն. մինչդեռ անցեալ տարիները փայտը ծախվում էր քառակուսի վերշոկը 6—7 կոպէկի, այս տարի մի չը տեսնված գին ունի—4 կոպէկ։ Անցեալ տարիների նման գիւղացիք անտառներից բերում են և ահաբեկվում, երբ տեսնում են շուկայի գինը շատերը դեռ մի բան էլ ՀՇաս են անում, անտառում գնածից էլ պակաս ծախելով։

Խոտի հունձը վերջացել է, որը լաւ էր. գարին պատրաստ է հնձելու, բայց շարունակ յորդ անձրևները միջոց չեն տալիս։ Երկիւղ ենք կրում, որ այս շարունակ անձրևները, որ երբեմն քամիախառն և ցրտային է, կարող է մրսեցնել նոր ծածուն արած ցորենի արտերը, որոնք հրաշալի հասկեր են տուել ու խոստանում են առատ բերք։ Գիւղացիք պատմում են, որ վերջին 20 տարվայ մէջ այս տեսակ գեղեցիկ հացաբոյսեր չեն տեսել. ուրեմն եթէ պատահարներից ազատ մնան, կարող են թեթևացնել գիւղացու ծանր կացութիւնը, ապահով զգալով իրան գոնէ հացի կողմից։

Մ. Ոսկան

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Օգոստոսի 10-ին

Ցայտնի է Թէբուլի կոտորածը։ Մանում էք այդ չարաբաղդ գիւղը. փողոցներում կանայք խումբ խումբ, ոտաբոբիկ, ջլատված, գզգված, իրանց որբ մնացած երեխաների ձեռքից բռնած «բայաթիներ» են կանչում, յիշում են իրանց վաղամեռիկ ամուսիններին, որոնք մորթոտվեցին վայրենի Թուրքերի ձեռքով, յիշում են իրանց երէկը, երբ ամուսինը աշխատում էր և ամբողջ գերդաստանը ապրեցնում, տեսնում են իրանց սև ներկան, արցունքների կաթիլներով ողողում են Թէբուլի փողոցները։... Սարսափահար հայ տարրը կար-

ծում է, որ այդ կոտորածները կարող են նորից կրկնվել. ամբոխը չէ ուզում հաւատալ, որ այդպիսի մի սոսկում այլ ևս չէ կարող կրկնվել, քանի որ կառավարութիւնը ձեռք է առնում և պիտի ձեռք առնէ, ինչպէս լսում ենք, աւելի խիստ, կտրուկ ու եռանդուն միջոցներ։

Միայն մի իրողութիւն սոսկում է տարածել հայ շինականի վրա, այդ այն է, որ Թուրքերը այժմ կազմել են ձիաւոր և հետևակ զինված խմբակներ և կոտորում ու թալանում են մեծ ճանապարհների վրա, իսկ Թմբուլ գիւղի Թուրքերը սպառնում են, որ մօտ է նոր կոտորածի օրը, որից սարսափահար փախչում ու գաղթում է այդ գիւղի Թուլամորթ, Թուլահոգի և Թուլասիրտ վախկոտ ժողովուրդը։

Օգոստոսի 7-ին վեց հոգի բերդաններով զինված Ներհամցի ու Պարսկաստանի Վարմաղեաց գիւղից յարձակվում են ու կողոպտում աստապատցի ջուր կապող չորս հոգու վրա, որոնք գնացել էին «Սեռերի առուն» կոչուող բանդից Յարութիւնի թթենու մօտից ջուր կապելու։ Կողոպտվածներն են՝ Կարապետ Համբարձումեան, Ղազար Շահոյեան, Սեդրակ Գալուստեան, Կարապետ Սարգսեան։ Պէտք է յիշել այստեղ, որ այժմ Անդրկովկասի պարսից ու Թիւրքական սահման կազմող Արաքսի ջուրը խիստ նուազել է և Պարսկաստանի Թուրքերը Հին-Նախիջևանի գաւառի Ղարաչուղ, Բուլղան, Եաշի և այլ գիւղերը օգտվելով այդ հանգամանքից, գիշերները Արաքսի ծանծաղուտներից շարունակ բերդաններ են տեղափոխում ու մատակարարում Թուրքաբնակ գիւղերին, իսկ աւելի խորունգ տեղերից նոյնպէս համարձակ կերպով անցնում են սահմանի վրա գտնվող Թուրք գիւղերի կոնտրաբանդիստները։ Նրանք մի կամ երկու տիկ վերցնելով՝ փչում են, լցնում օդով, հրացանի կոթը ու խողովակի մի մասը տեղաւորեցնում են տիկի մէջ, իսկ հրացանի բերանը մի լաւ խցան են զարկում, որ ջուր չը լցվի այդ երկու տիկերը. մի մարդ կապում է իր մէջքին ու իրան ձգում Արաքսը, որի հոսանքը կոնտրաբանդիստին քշում է ռուսաց սահմանը։ Մի մարդ միանգամից անց է կացնում մէկից մինչև չորս բերդաններ և ծախելով Թուրքաբնակ գիւղերին դարձեալ վերադառնում է Պարսկաստան նորանոր բերդաններ հաւաքելու։

Յուլիսի 31-ին, քեզիլեցի, միլախցի և ուրիշ գիւղերից 10—12 Թուրքեր զինված բերդաններով, և միլախցի Մամադ Ռահիմի ղեկավարութեամբ Մահարլամ Մաշադի Մէյտի-Ղուլիօղլու Քալբալայի, Թէյմուրի, Քեզիլեցի և ուրիշ աւազակների ընկերակցութեամբ, չարչարելով սպանում են երեք հոգի խեղճ անդէն զաղանչեցի հայերին, որոնք Հին-Նախիջևանից կերօսին էին տանում գիւղը։ Սպանվածներն են Ռուստամ, Տիգրան Գէորգեան և Յովհաննէս Հայրապետեան, երևի նրա համար, որ այդ գիւղը 10 օր դիմադրելուց յետոյ չենթարկվեց մենգօլական արշաւախմբերի ասպատակութեան, որոնք հաւաքվել էին քանից աւելի շրջապատող Թուրք գիւղերից։ Գիւղերի մեծամասնութիւնը հողերը չեն վարում, սպասելով, որ մի ապահով դիրք ստեղծվի հայի համար...

Ա. Տէր-Ստեփաննոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նուշուց ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, Նուշի քաղաքը շրջապատել են Թուրքերի զինուորական աւազակախմբերը և անընդհատ հրացանաձգութիւն է շարունակվում հայերի և և Թուրքերի միջև։ Սպանված են 8 հայեր և 81 Թուրքեր, կան մի քանի սպանված ռուսներ։ Կարգը վերականգնելու համար ուղարկված են զօրքեր։ Երէկ, օգոստոսի 18-ին ստացված է մի այլ հեռագիր Գանձակից որը ասում է, Թէ Նուշում հրդեհ է սկսված և դրա հետ միասին կտրված է հեռագրական հաղորդակցութիւնը։ (Кавказъ)

—

Գարնանը պտտվող լուրերը այն մասին, Թէ Բագու քաղաքի և Բագուի նահանգի մէջ բարձրագոյն հրամանով քննութիւն կատարող սենատոր Կուզմինսկին նշանակվում է Կովկասի փոխարքայի օգնական նորից սկսել է պտտել այն յատուկ լուրի հետ միասին Թէ վերոյիշեալ պաշտօնից հեռանում է գաղտնի խորհրդական Սուլթան-Կրիմ-Գիրէյ։ (Русь)

—

Լրագիրները լուր էին հաղորդել, որ Կօբէկօի յանձնաժողովի զբաղմունքների բոլոր նիւթերը ժամուլի վարչութեան վերաբերմամբ պէտք է յանձնվեն Պետական Դումային և Կօբէկօի յանձնաժողովը պէտք է դադարեցնի իր նիստերը։ Այդ լուրերը ասում է «Бирж. Вѣд.» լրագիրը, բոլորովին զուրկ են հիմքից։ Յանձնաժողովի պարապմունքների արդիւնքները շուտով կը յանձնվեն պետական խորհրդի քննութեանը նախքան Պետական Դումայի բացումը։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը մինիստրների խորհրդին յանձնել է ընդարձակ վիճակագրական տեղեկութիւններ հրէաների մասին Ռուսաստանում։ Այդ տեղեկութիւններից երևում է, որ հրէաների համար բնակավայր նշանակված տեղերում ապրում են 4,899,500 հոգի հրէաներ։ Դրանցից 98%-ը իր համար մայրենի լեզու է համարում գերմանական աղճատված մի գաւառաբարբառ, իսկ մնացած 99,830 հոգին կամ 2%-ը մայրենի ու գործածական լիովին համարում են ռուսերէնը, լեհերէնը, գերմաներէնը և Թուրքերէնը։ Հրէաների ռուսացումը չափազանց աննշան է։ Ցայսմ է որ 5,370 քրիստոնեաներ իրանց մայրենի լեզուն համարում են հրէական բարբառը։

—

Թիֆլիսի արհեստագիտական դպրոցի նախկին տեսուչ Վ. Բցխիլաձէ մի յայտարարութիւն ներկայացրեց քաղաքագլխին, առաջարկելով միջնորդել Կովկասի Փոխարքայի մօտ վերականգնելու քաղաքային արհեստագիտական դպրոցում տեղական բաժանմունքներ, աւանդելով առարկաները այդ բաժանմունքներում մայրենի լեզուներով։

—

Հարիւրից աւելի գերմանացի ընտանիքներ Բիգայից փախել էին Գերմանիա։ Մարդատար շոգենաւերը, որ գործում են Բիգայի և Գերմանիայի միջև, միշտ լիքն են Եւրոպա մեկնողներով։ Ժողովրդի մէջ ընդհանուր երկիւղ է տիրում։

—

Զինուորական մինիստրութեան մէջ հարց էր յարուցված վերացնել օֆիցէրներին զինուոր ծառայ տալու սովորութիւնը։ Այդ հարցը լուծվում է դրական ձևով։ Երբ զինուորական մինիստրին զեկուցում են ներկայացնում, որ հարկաւոր է բարձր պաշտօնեաների համար կառապաններ նշանակել զինուորներից, նա մակագրել էր զեկուցման վրա. «Ընդհանրապէս ցանկալի է վերացնել պ. պ. օֆիցէրներին զինուորներից ծառայ տալու սովորութիւնը»։ Արդէն գլխաւոր շտաբին է ուղարկված այդ հարցի մասին մի զեկուցագիր։

—

Բելօստոկից հաղորդում են «Разсвѣтъ»-ին. «Վերջին օրերս նկատվում էր, որ ժողովուրդն ահագին խմբերով հեռանում, փախչում է քաղաքից։ Ով որ հնար ունի, իսկոյն ընտանիքն ուղարկում է ուրիշ քաղաքներ։ Առևտուրն ու արդիւնագործութիւնը գոսացել են, բանկերը գործում են թոյլ և գործ ընդհանրապէս չը կայ։ Դրութիւնն ընդհանրապէս ողբալի է»։

—

Ներքին գործերի մինիստրութեան զեմստվային բաժանմունքը, անբերրիութիւնից ամենախիստ ազատներ կրած 5 նահանգների նահանգապետների տուած տեղեկութիւնների համեմատ, հասել է այն եզրակացութեան որ, հարկաւոր են հետևեալ գումարները, որպէս զի միմիայն ամենահասարակ ուտելիք կամ հաց տրվի յիշված նահանգներին։ Տուլայի նահանգի համար պահանջվում է 6 միլիոն բուբլի, Օրլովի՝—3 միլ., Տամբովի—3 միլ., Բէզանի—6 միլիոն և Սարատովի—4 միլիոն։ Պենզայի նահանգապետն էլ ներկայացնում է մի այդպիսի հաշիւ իր նահանգի համար—4½ միլիոն բուբլի։

—

Ինչպէս երևում է Պետական բանկի օգոստոսի 3-ին հրատարակված հաշուէկշռից կամ բալանսից, բանկը նորից բաց է թողել 10 միլիոն բուբլու թղթադրամ։ Դրանով նրա բաց թողած բոլոր թղթադրամի քանակութիւնը հասնում է 1,040 միլիոն բուբլու։

—

Ռուսական նաւատորմի համար օժանդակութիւններ հաւաքող մարմինն այժմ մտադիր է կազմել մի «Նաւատորմային Լիգա», որպիսին գոյութիւն ունի Գերմանիայում։ Այդ Լիգայի կամ դաշնակցութեան նպատակը լինելու է բարձրացնել և զօրացնել ծովային գործի ընկած վիճակը։ Լիգայի կանոնագրութեան հիմնական յօդուածներն արդէն մշակված են և կարճ ժամանակում վերջնականապէս պատրաստ կը լինի։

—

Վերջին օրերս Պետերբուրգում խիստ յատուկ լուրեր են պտտում, որ հօֆմայստէր Բուլիգինը թողնում է ներքին գործերի մինիստրի պաշտօնը պետական-քարտուղարի տիտղոսով։ Նրան փոխարինելու է կոմս Իգնատիեվը, որ այժմ նախագահ է ուժեղացրած պաշտպանութեան հարցը քննող յանձնաժողովի։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԴՈՒՄԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

17 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երէկ, ուսուցչապետ Դ. Ի. Մենդելէյեվի յիսնամեայ գիտական և հասարակական գործունէութեան առիթով ստացվեցան բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ, չը նայելով, որ ինքը բացակայ էր քաղաքից։ Կարևոր գործերի դատարանական քննիչը վերջացնում է ֆինանսների մինիստրութեան խորհրդի նախկին անդամ Կասպերօվի յայտնի գործի քննութիւնը, որը մեղադրվում է 140,000 բուբլու ժամակարարութեան գումարի վատնելու մէջ։ Այս օրերս նա կազատի կալանաւորութիւնից Կասպերօվին, որ ներկայացնում է վատնած գումարի չափով գրաւական։ Նրա պաշտպանը հաղորդում է, որ իբրև վկաներ հրաւիրված են Վիտտէն, նրա նախկին օգնական Կավալեվսկին և ֆինանսների ներկայ մինիստր Կոկովցեվը։

ԳՈՒՆԶԱՌԻՆ, 17 օգոստոսի։ Սախալինի փոխ-նահանգապետ Բունգէն ուղարկելով զեկուցում Գրոնդէ հրուանդանով, վերադառնում է Շանխայով։

ՊԱՐԻԶ, 18 օգոստոսի։ Յունաստանի Թագաւորը երեկոյեան Պարիզից մեկնում է դէպի Կոպէնհագէն։

ՕՍՏԵՐԲԷՅ։ Նախագահ Բուլվէլը Կօմուրային գրել է խնդրելով յայտնել Միկադոյին իր ջերմ շնորհաւորութիւնները նրա և իր ժողովրդի ցոյց տուած խնամութեան և մեծանոգութեան առիթով։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 17 օգոստոսի։ «Նիւ-Եօրկի Թայմսը» ասում է, որ ամբողջ աշխարհին վաղուց յայտնի է, որ Վիտտէն տերունական մեծ գործիչ է, իսկ այժմ էլ արդէն ամենքը համոզվել են, որ նա մի և նոյն ժամանակ և մեծ դիպլոմատ է։ Իսկապէս ասած, Վիտտէն է թելադրել հաշտութեան պայմանները։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 18 օգոստոսի։ Սախալինի և կօրէական սահմանի վրա երկու պետութիւններին էլ արգելվում է ամրութիւններ կառուցանելը։

ՍԼԻՆԷՄԻԻՆԴԷ, 18 օգոստոսի։ Անգլիական էսկադրան առաւօտեան դուրս է գալիս։

ՎԻԷՆՆԱ, 18 օգոստոսի։ Սպասվում է, որ ունգարական կրիզիսը բարեյաջող կերպարանք կընդունի։

Կ. ՊՕԼԻՍ, 18 օգոստոսի։ Հաշտութեան կնքման լուրը բարեհաճ տպաւորութիւն թողեց։

ԲԵԼԳՐԱԴ, 18 օգոստոսի։ Կատարվեցան Սերբիայի մետրոպոլիտի ընտրութիւնները։ Ընտրված է եպիսկոպոս Դիմիտրին ձայնից բազմութեամբ։

ԵՒԼԱԽ, 18 օգոստոսի։ Շուշում մահմեդականների և հայերի մէջ եղած ընդհարումները մեծ ծաւալ են ստանում։ Նահանգապետը ուղևորվել է Շուշի.

ԲՕԲՐՈՒՅՍԿ, 18 օգոստոսի։ Հրատարակված են Մինսկի նահանգապետի պարտադիր կարգադրութիւնները, հանրամբուռներ, ժողովներ և զէնքեր պահելու արգելման մասին։

ՊԱՐԻԶ, 18 օգոստոսի։ Լուբէն Բուզվէլտին ուղարկել է մի շնորհաւորական հեռագիր այն զգալի ծառայութիւնների առիթով, որ նա արել է մարդկութեանը։

19 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պաշտօնական։ Պաշտօնական տեղեկութիւններ Հեռաւոր Արևելքից օգոստոսի 18-ին չեն ստացված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ Պաշտօնական։ Կառավարչական հաղորդագրութիւն։ Ներկայ տարվայ մայիսի վերջում Թագաւոր Կայսրը բարեհաճեց համաձայնվել ընդունելու Հիւսիսային Ամերիկայի Միացեալ-Նահանգների նախագահի առաջարկութիւնը ռուս և եապոնական լիազօրների տեսակցութեան մասին՝ պարզելու համար այն հարցը, Թէ որ չափով իրագործելի է երկու պետութիւնների համար ևս խաղաղութեան պայմանների որոշումը։ Բարձրագոյն վստահութեամբ այդ նշանաւոր միսսիան տրվեց մինիստրների կոմիտեի նախագահ պետական-քարտուղար Վիտտէի և Վաշինգտոնի կայսերական դեսպան հօֆմէյստէր բարոն Ռուզէնի վրա, որոնք լիազօրութիւններ ստացան, որոնց հիման վրա նրանք կարող էին, եապոնական առաջարկութիւններն ընդունելու դէպքում, սկսել խաղաղութեան դաշնագիրը կազմելու և փոխադարձ հաշտութեան գալու գործը։ Բանակցութիւնները պէտք է կատարվէին ամերիկական հողի վրա։ Յուլիսի 25-ին Օյստերբէյում կայացան երկու պատերազմող կողմերի լիազօրների առաջին տեսակցութիւնը, իսկ յուլիսի 27-ին Պորտսմուտում սկսվեցին խորհրդակցութիւնները։ Երկրորդ նիստին եապոնական պատուիրակները ներկայացրին Տոկիօում մշակված խաղաղութեան պայմանները։ Ուշադրութեան առնելով, որ այդ մայմաններից մի քանիսը, ռուսական լիազօրների ունեցած հրահանգների հիման վրա, անընդունելի էին, իսկ ուրիշ պայմանների խմբագրութիւնը կարող էր հասկացվել ի վնաս Ռուսաստանի շահերի, պետական քարտուղար Վիտտէն առաջարկեց եապոնական պատուիրակներին՝ խնամքով քննութեան առնել իւրաքանչիւր կէտը առանձին, նուիրելով այդ աշխատանքին մի քանի նիստեր։ Ռուսաց լիազօրներն եկան այն եզրակացութեան, որ եապոնական առաջարկութիւնների չորս կէտերի վերաբերմամբ չէ կարող համաձայնութիւն կայանալ, և այդ պատճառով եապոնական պատուիրակները պարտականութիւն յայտնեցին խնդրելու լրացուցիչ կառավարութիւնից՝ հաշտութեան ելք գտնելու համար ծագած լուրջ դժուարութիւններից։ Տոկիօի հետ յարաբերութիւն ունենալոց յետոյ առաջին խորհրդակցութեան մէջ եապոնական պատուիրակները յայտնեցին, որ նրանք հեռաժարվում են, նախ՝ իրանց դրած պայմանից, այն սահմանափակ։ ռուսական զինուորական ծովային ոյժերը Խաղաղ ովկիանոսում, երկրորդ՝ չէզոք նաւահանգիստները մտած ռուսական նաւերը Եապոնիային յանձնելուց, բայց շարունակում են պնդել, որ Ռուսաստանը զիջանէ թէ Սախալինը, և թէ մանաւանդ պատերազմական տուգանք տայ Եապոնիային։ Ղեկավարվելով իրանց տրվաի հրահանգներով, ռուսաց լիազօրները կտրականապէս մերժեցին վերջին առաջարկութիւնները, յայտնելով, որ նրանք չեն կարող շարունակել խաղաղութեան պայմանների քննութիւնը մինչև այն ժամանակ, քանի որ Եապոնիան կը պնդէ պատերազմական ծախսերի վերադարձման վրա։

Ուշադրութիւն առնելով այը հանգամանքը, որ գնրծի այդպիսի ընթացքը կարող էր երկու պետութիւնների լիազօրների բանակցութիւնները ընդհատել, Միացեալ-Նահանգների նախագահը, որի շնորհիւ կայացան խորհրդակցութիւնները Պորտսմուտում, վճռել նորից իր կառավարութեան՝ Պետերբուրգ ներկայացուցչի միջոցով ցիմել Թագաւոր Կայսրին, խնդրելով յանուն Նորին Կայսերական Մեծութեանը ոգեորող մարդասիրական զգացմունքների, ընդունելու եապոնական կառավարութեան նոր առաջարկութիւնը, որպէս զի առաջն առնվի նորանոր արիւնահեղութիւնների։ Այդ առաջարկութիւնը կայանում սր նրանում, որ Ռուսաստանը, ի նկատի առնելով եապոնացիների Սախալինի վրա արդէն հաստատված լինելը, համաձայնի Եապոնիային թողնելու կղզու հարաւային այն մասը, որ մինչև 1875 թ. պատկանում էր նրան, հիւսիսային մասը 1,200,000,000 իէն վարձատրութեամբ գնելու պայմանով։ Արտայայտելով նախագահ Բուզվէլտին իր շնորհակալութիւնը հաշտութեան վերականգնման համար նրա գործադրած ջանքերի համար, Թագաւոր Կայսրը, սակայն, յարմար չը գտաւ ընդունելու վերոյիշեալ առաջարկութիւնը, որ իր էութեամբ մի և նոյն էր Թէ Եապոնիային պատերազմական տուգանք է վճարում, այդ վճռի մասին յայտնվեց ռուսական լիազօրների միջոցով։ Եապոնական պատգամաւորները օգոստոսի 16-ին նշանակված նիստում յայտնեցին, որ կառավարութիւնից ստացված հրահանգները ցոյց են տալիս, որ Եապոնիան հրաժարվում է պատերազմարան ծախքերի համար որ և է դրամական վարձատրութիւնից, բայց և մի և նոյն ժամանակ պահում է իր համար իր գրաւած Սախալինի հարաւային մի մասը։ Զարտականութիւն է տրված կղզու այդ մասում ոչ մի պատերազմական միէոցի չը դիմել, ամրութիւններ չը կառուցանել և Լապերուզեան ջրանցքը բաց պահել։ Այդպիսով վերոյիշեալ զեկուցումը արձանագրութեան մէջ մտցնելուց յետոյ, վերջացան պատգամաւորների խորհրդակցութիւնները հաշտութիւն կնքելու նախնական պայմանների առթիւ, որոնք պէտք է ծառայէին իբրև հիմք Ռուսաստանի և Եապոնիայի մէջ վերջնական հաշտարար դաշնա-

գլուխեան համար»։ Արձակվում է իր խնդրի համաձայն, քայքայված առողջութեան համար, Գանձակի նահանգապետ Լիտցաուն պաշտօնից և ծառայութիւնից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լրագրական տեղեկութիւնների համաձայն սատան-քարտուղար Վիտտէին, բացի Եապոնիայի հետ հաշտութիւն կնքելու մասիայից յանձնվել է նաև Ամերիկայում մի մեծ փոխառութեան համար հող պատրաստելը։ Այդ տեսակէտից Վիտտէի աշխատանքը աջողութեամբ է պսակվել։ Փոխառութիւնը արդէն ապահովված է։ Կապիտալիստների հետ միաժամանակ բացվում են մի շարք ուրիշ քրէական գործեր, որոնց մէջ իբրև մեղադրեալներ կը ներկայանան ֆինանսների մինիստրութեան մի քանի ատիճանաւորները։

ՊՕՐՏՍՄՈՒԹ, 18 օգոստ. Մարտէնսը և Դէնիսովը ձեռակերպել են խաղաղութեան դաշնադրութեան նախագիծը, որի մէջ լինելու են ութ գլխաւոր կէտեր և մի շարք լրացուցիչ յօդուածներ։ Վաղը սպասվում է խաղաղութեան արձանագրութիւնը խմբագրելու աւարտումը և Խուդվէլտի ներկայութեամբ նրա ստորագրելը։ Դէնիսովը հաւատացնում է, որ Ռուսաստանի և Եապոնիայի միջև ունենալիք առևտրական պայմանագիրը կը ստորագրվի վերջում, որը երաշխաւորում է երկու ազգերին այն առաւելութիւնները, որոնք ունեն աջող հանգամանքների մէջ գտնվող պետութիւնները։

ԼՕՆԴՕՆ, 18 օգոստ. Անգլիայի եապոնական ֆինանսական գործակալ Տակահիշան յայտնեց, որ Եապոնիան միտք չունի նոր փոխառութիւն անելու, որովհետև Լոնդոնում, Նիւ-Եօրկում և Բերլինում իր տրամադրութեան տակ ունի մի միլիոն ֆունտ ստերլինգից աւելի մի գումար։—Եապոնական գեներալ կոնսուլը Գլազգովում տեղեկութիւն է ստացել արդէն պատերազմելու ութ հատ նոր մեծ շոգենաւ «Ինպոն» ընկերութեան համար։ Եապոնիան անյապաղ ձեռնամուխ կը լինի մեծացնելու իր առևտրական նաւատորմը։

ՄՕԴՋԻ, 18 օգոստ. Ամբողջ ռուսական զօրքը կենտրոնացած է Սօմգարի գետի ափերում, որ ըստ երևոյթին կազմում է Ռուսաց պատերազմական գործողութիւնների յենակէտը։

ՏՕԿԻՕ, 18 օգոստ. Խաղաղութեան մասին երէկվայ տեղեկութիւնը ստանալուց յետոյ «Խոշի» լրագրի խմբագրատան դրօշակը իջեցրվեց ի նշան տրտմութեան։ Եապոնական լրագիրների բոլոր խմբագիրների տրամադրը ժողովում, բացառութեամբ «Կոկումին» լրագրի, որոշված է, որ խաղաղութիւն կնքելու պաշտօնական յայտարարութեան օրը իւրաքանչիւր լրագրի խմբագրատուն կիջեցնէ իր բնակարանի դրօշակը։

ՆԻՒ-ԵՕՐԿ, 18 օգոստոսի, Այն տեղեկութիւնը թէ պողպատի առևտրական միութեան ներկայացուցիչ Շվաբը պայմանագիր է ստորագրել ռուսների համար պատերազմական նաւեր շինելու մասին, անհիմն է։—Անգլո-Եապոնական միութիւնը ի միջի այլոց նպատակ ունի պաշտպանել կենտրոնական Ասիան ռուսական ազդեցութիւնից։ Անգլիան երաշխաւորում է Եապոնիային նրա նոր ձեռք բերած երկրների երկրաչափ տիրապետութիւնը, իսկ Եապոնիան իր կողմից պարտաւորվում է օգնութիւն հասցնել Անգլիային Ասիայում նրա տիրապետութիւնների վրա յարձակումներ գործելու դէպքում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ

Մասնագէտ սիզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ, երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20. (ե. հ. շ. կ.) 3—30

Դպրոց եւ Մանկական Պարտէզ

Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆԻ

Վերսկսում է աշակերտների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։ Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 1-ից։ Միքայէլեան փողոց № 154. (17, 21, 28) 2—3

Վաճառվում են

ՆՈՐ ԼՈՑՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐ

Հրատարակութիւն Անդրէասեանի կ.

Ինչ է աղգութիւնը, Ռէնանի, թարգմ. Յար. Ղարագեօզեանի. . . . 20
Ուրիշի գերեզմանի վրա առանց արտասուքի են լաց լինում 10
Դուրեանի բանաստեղծութիւնները III տպ. 20
Որտեղ կայ սէր, այնտեղ է և Աստուած, Լ. Տոլստոյի, ... 5
Երեք մահ, Լ. Տոլստոյի . . . 10
Ճշմարտութիւն 5
Պատկերներ Բաֆֆու կեանքից . . 40
Եղբայրը եղբօր դէմ, Վ. Հիւգոյի . . 10
Փեսացուներ և Հարսնացուներ . . 5
Հեշտ միջոց ռուսերէն կարդալ, գրել և խօսել սովորելու 30
Քերականն կամ Այբբենարան ռուսերէն բառարանով 10 կ., 100 հատ գնողներին 3 ր. 50 կ. ճանապարհածախսով։
Հեշտ միջոց Թուրքերի համար ռուսերէն լեզուն սովորելու—երկու տեսակ, մէկը 70 կ. միւսը 40 կ.։

Մի եւ նոյն ժամանակ կաստրում եմ առանձին պատուիրեր հայերեն դասագրքերի.

Տէր-Ղևոնդեանցի Մայրենի լեզու, բոլոր մասերը։ Ղազարոս Աղայեանի, Մայրենի լեզու բոլոր մասերը։ Յովհաննէս Աբրահամեանի, Մայրենի լեզու, բոլոր մասերը։
Սահակ քահ. Սահակեանի, Դասատետր կրօնի I, II, III, Սրբազան պատմութիւն Հին և Նոր ուխտի։
Եղնիկ քահ. Երզնկեան Կրօնի դասագրքեր և զանազան գրքեր։
Մինչև 3 ր. պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։ 3 ր. աւել պահանջողներին դասագրքերի համար 20 կ. զեղչ, իսկ ընթերցանութեան գրքերի համար 25 կ. զեղչ. բոլոր ծախսերը մեզանից։
Պատուէրները կատարվում են այն ժամանակ, երբ որ պահանջի հետ կուղարկեն գումարի մի 1/3 մասը։

Հասցէն. Тифлисъ, улица Броссе, № 5 книгоиздатель А. А. Ованесянцъ.

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ
ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ԼՈՑՍ“

օրացոյց-հանդէսի համար. երեսը 12 ր., 1/2 եր.—7 ր. 1/4 եր. 4 ր.։ Յայտարարութիւններ հաւաքելու լիազօրութիւն տուած է պ. Մամաջանեանին։ Կարելի է ուղարկել և խմբագրութեան հասցէով՝ Тифлисъ, Мадатовская 5, Е. Топчяну. 4—5

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Ս. Գ. Շերվազանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Ելիսաբետեան հրապարակ, տուն Արղութեան, բնակարան Լալայեանցի բնակարան։

Ա. լէքսանդրոպոլում Ուսումնարանական շրջանի պ. Հոգաբարձուի թոյլտուութեամբ, Առևտրական դպրոցի հանդէպ, օգոստոսի 20-ից

ԲԱՑՎՈՒՄ Է ՊԱՆՍԻՕՆ.

ընդունելու են սահմանափակ թիւով գիշերօթիկներ գլխաւորապէս Առևտրական դպրոցի աշակերտներից։

Դիմել՝ Александрополь, содержателю пансиона и училища учителю Гайку Хачатурянцу. 3—4

Գուտտենբէրգ

Գրախանութում վաճառվում են Յովհ. Աբրաքէեանի աշխատութիւնները.

Մայրենի լեզու Ա. տարի . . 25 կոպ.
» » Բ. » . . 30 »
» » Գ. » . . 40 »

Տարական քերականութիւն հայոց աշխարհաբար լեզուի 25 կ.

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնէ Ի. Վազովի «ԼՄԻ ՏԱԿ» յայտնի վէպը (երկու մասը միասին), թարգմ. Յովհ. Աբրաքէեանի։ Գինը 1 ր. 25 կոպէկ։ Պահեստը լինելու է «Գուտտենբէրգ» գրավաճառանոցում։ 9—10

Կենտրոնական

գրավաճառանոցում, Թիֆլիսում, վաճառվում են հետեւեալ գրքերը.

Ասրպեռ. Սարրաի, ողբերգութիւն 5 արար. գ. 30 կ. ճ.ծ. 13 կ.։ Շինոց, պատկեր, 30 կ. ճ.ծ, 13 կ.։ Թուլումբաջիներ, պատկեր, 10 կ. ճ.ծ. 11 կ.։ Ժառանգներ, 30 կ. ճ.ծ. 13 կ.։ Բէբրսաւ Առաքելը, 25 կ. ճ.ծ. 11 կ.։ Քօռ-Եղիկ, վէպ, 30 կ. ճ.ծ. 13 կ.։ Շուշան, օպերա 3 արար. 1 ր. ճ.ծ. 20 կ.։ Երկերի ժողովածու, հ. ա. 1 ր. ճ.ծ. 20 կ., բ. հատոր 1 ր. ճ.ծ. 20 կ., գ. հատոր 1 ր. ճ.ծ. 20 կ., դ. հատոր 1 ր. ճ.ծ. 20 կ., ե. հատոր 1 ր. ճ.ծ. 20 կ., զ. հատոր 1 ր. ճ.ծ. 20 կ.։ Խեւ Կարապետ, 1 ր. ճ.ծ. 25 կ.։

Միանուագ բոլոր գրքերը պահանջողները Թիֆլիսում ստանում են 10% զեղչ, իսկ օտարքաղաքացիները ճ.ծ. չեն վճարում. վերջիններին պէտք է գինը կանխիկ ուղարկեն։ (չ) 2—10

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուլուխանլու-Զուլֆայի երկաթուղու աշխատանքների վարչութիւնը յայտարարում է ամենքին Ուլուխանլու և Զուլֆայի միջև գընացքների շարժողութեան մասին հետեւեալը.

Ուլուխանլուից գնացքները մեկնում են երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը, առաւօտեան ժամը 8 և 45 րոպէին և Նախիջևան հասնում են երեկոյեան ժամը 6-ին։

Նախիջևանից գնացքները մեկնում են կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, առաւօտեան ժամը 8-ին և հասնում են Ուլուխանլու երեկոյեան ժամը 6-ին։ Ժամերը հաշուած են Պետերբուրգի հաշուով։ 1—3

Խնդրում եմ հայ հեղինակներին և թարգմանիչներին Թիֆլիսում, կամ Թիֆլիսից դուրս յայտնել մանրամասն իրանց հասցէն. (Թիֆլիսում քաղաքային նամակով) Մեր հասցէն՝ Тифлисъ. ул. Броссе № 5 Книгоиздатель А. Ованнесянцъ. 1—1

ԴՊՐՈՑ

Կատ. Լիսիցեանի

Երկու սեռի մանուկների համար։ Ընդունելութիւնը՝ օգոստոսի 27-ից, ուսման սկիզբը՝ սեպտեմբերի 6-ին։ Բեհբութեան փող. սեփ. տուն 29։ (21, 23, 25, 27) 1—10

Լոյս տեսաւ
ՄԱՐԳԱՐ

Հաղածանքի Ծնունդ

Քերթուած (պօէմա)
Գինը 20 կոպ.

Թարգմանված է և շուտով լոյս կը տեսնի
И. А. РОЖКОВЪ-ի

О формахъ народнаго представительства

գրքոյկը

Դիմել՝ Баку Маргару. фотографія И. Меликянца. (չ.չ.) 1—5

ԲԺԻՇԿ

Լեւոն Օհանջանեան

Մասնագէտ սիզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գոլովինսկի պրոսպէկտի և Կաղետսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կաղետսկի փողոցից № 2. (ա. օ.) 4—300

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Թիֆլիսում վաճառվում են հետեւեալ գրքերը.

Ահարոնեան Ա. Ժողովածու երկերի, հատոր ա. Ս. Գ. գ. 1 ր. ճ.ծ. 25 կ.
» Մրրկի սուրը, Թիֆ. 1 ր. ճ.ծ. 25 կ.
» Իտալիայում, Թիֆ. 1ր, 50 կ., ճ.ծ. 25կ.
» Արաղը, Թիֆ. 80 կ. ճ.ծ. 20 կ.
» Լուութիւն, Թիֆ. 60 կ. ճ.ծ. 15 կ.
Լէօ. Ս. Մեսրոպ, Թիֆ. 75 կ. ճ.ծ. 15 կ.
» Գրիգոր Արծրունի, 3 հատ. 4 ր. ճ.ծ. 60 կ.
» Մէլիքի աղջիկը, Թիֆ. 1 ր. 50 կ. ճ.ծ 30 կ.
(ո.) 3—3



„ՄԵԾ ՎԱՃԱՌՔ“

«ՎԱՐՇԱՎԱՑԻ ԱՈՒԿՑԻՈՆԸ»

Զեկուցանում է հասարակութեանը, որ ներքևում յիշված ոսկէ ապրանքները հաւաքված լինելու պատճառով՝ յուլիսի 1-ից սկսած, նշանակված է մեծ վաճառք արժէքից պակաս գներով, այսինքն՝

1) Ոսկէ, փակ, 3 ծածկով ժամացոյցներ 56 պրօբի, կանանց ժամացոյցներ, արժատից լարվող, 30 բուբլու փոխարէն 15 ր. 50.
2) Նոյնը ֆանտազիա . 18 ր.—20 ր.—25 ր.
3) Նոյնը, տղամարդոց համար, 56 պր. ոսկուց 35—40—45 ր.
4) Նոյնը, Մօզէրի, 100 ր. փոխարէն 58—65 ր.
5) Արծաթէ փակ ժամացոյցներ, ամուր կազմով, 15 քարանոց, տղամարդու համար, 84 պր. Անկր. փոխանակ . . 12 ր.—6 ր. 50 կ.
6) Նոյնը, 23 քարով . . 8,25.
7) » մրցանակ լաւ հրացանաձգութեան համար, փակ և պինդ . . 8,50
8) » ծանր, 80 գրամ, պնդակազմ 9,90
9) » բրէգէտեան մազով, ուղղագիծ 10,80
10) » առանց բանալու լարվող, հիանալի զարդերով, փակ, տղամարդու համար, . . . 7—9—12 ր.
11) » կանանց համար, փակ, արծաթէ 5,60
12) Անգլիական սև, ագռաւագոյն պողպատից, Անկր, գերազանց կազմով, տղամարդու համար . . 2 ր. 85 կ.
13) Նոյնը ագռաւագոյն պողպատից, տղամարդու համար, ցիլինդր. 2 ր. 35 կ. Ծածկոցաւորները 1 բուբլի աւելի արժէն։
14) Կանանց համար, ագռաւագոյն պողպատից, նուրբ բանուածքով . 2 ր. 35 կ. Ծածկոցաւորները 1 բուբլի աւելի արժէն։
15) Ամերիկական ոսկուց, բաց, ցիլինդր 2 ր. 75 կ.
16) Փակ, ոսկէջրած . . 3 ր. 75 կ.
17) Իսկական ամերիկական նոր ոսկուց, փակ, տղամարդու և կնոջ համար, փոխանակ 12 բուբլու 8 ր.

բոլորը 85 պրօբի արծաթից

Շղթաներ արծաթից, 84 պր., սնամէջ—1 ր. 80 կ.—2 ր., 3 ր.—5 ր., նայելով ծանրութեանը։

Ոսկէ շղթաներ, տղամարդոց և կանանց համար, երկար. 25 ր. 30—40—50—100 ր.։

Օտար քաղաքացիների պահանջները կուղարկվեն առանց գրաւականի և գնի վրա կաւելացվեն պօստի-ծախքերը. ով որ փողը կանխաւ ուղարկէ (կարելի է և պօստի մարկաներ ուղարկել) ճանապարհածախս չեն վճարում։

Դիմել — „ВАРШАВСКОМУ АУКЦІОНУ“ Варшава.

Թղթակցութիւնները ռուսերէն կամ գերմաներէն։ 4—4

Մի հայ օրիորդ Գարիզի Սօրբօնի ուսանողուհի, ցանկանում է դաստիարակչուհու պաշտօն ունենալ. համաձայն է գնուրիշ քաղաքներ. ունի վկայական։ Հասցէ՝ Антоньевская ул. № 1 д. Гакѣчова, Сагоянъ. (չ. շ.) 2—2

ԻԴԷԱԼ-ՑՆՈՐՔ ԴՈՒԽԻ

(IDÉAL RÊV)

ՈՒԺԵՂ, ՏԵՒՈՂԱԿԱՆ ԵՒ ՀԱՃԵԼԻ ՀՈՏՈՎ։

«ԲՐՕԿԱՐ և ԸՆԿ.»

(ամ. 20) 1—6

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուլուխանլու-Զուլֆա երկաթուղային գծի շինութեան վարչութիւնը յայտարարում է ընդհանուրի գիտութեան, որ մարդատար և ապրանքատար գնացքների ժամանակաւոր բացումը Ուլուխանլու և Նախիջևան կայարանների միջև տեղի կունենայ այս օգոստոսի 20-ին։ Ուլուխանլուից Նախիջևան գնացքները կը գնան երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը. Նախիջևանից Ուլուխանլու կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը։ Առաջին մարդատար-ապրանքատար գնացքը դուրս կը գայ Ուլուխանլուից Նախիջևան ներկայ օգոստոսի 20-ին, իսկ Նախիջևանից Ուլուխանլու օգոստոսի 21-ին։ Գնացքների ցուցակը կը յայտարարվի առանձին։ (ա. օ.) 3—3

Կովկասի Փոխարքայից հաստատված

ԴՐԱՄԱՏԻՔԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Թիֆլիս, Միքայէլեան փող., տելեֆոն № 123

Դասընթացքը 3 տարվայ։ Աւանդելիք առարկաները. Արտայայտիչ ընթերցումն. Բեմական գեղարուեստը, հայերէն (դասատու Հայ Դերասանական խմբի անդամ Յ. Աբելեանց) վրացերէն և ռուսերէն լեզուներով։ Դրամ, նկարչութիւն, պարեր, պլաստիկա, միմիկա, թատրօնի պատմութիւնը, ձայնի յարմարեցումն։ Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ամեն օր, ժամը 12—3 և 5—7 երեկոյեան։ Կուրսերի շինութեան մէջ։ Ծրագիրները տրվում և ուղարկվում են ձրի։ Կուրսերին կից կայ և բեմ։

Հիմնադիր օր. Ս. Մ. Դոլուխանեան

Въ типографіи типографскаго Т—ва «Гермесъ». Мад.ул. № 15.